«Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա» ՀԿ-ի ԷդուԱրմենիա նախաձեռնության

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց **2022**

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Աշակերտների կողմից դասերից ուշացումների հարցի մտահոգություն 4-9-րդ դասարաններում

Թեմա՝

Դասապրոցեսից սովորողների ուշացումները՝

ուսումնառության խոչընդոտող գործոն

Հետազոտող ուսուցիչ Ալիկ Գրիգորյան

Հրազդանի Վիլյամ Սարոյանի անվան թիվ 11 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն 3-4

Տեսական մաս 5-11

Հետազոտության նախագիծ.....12-14

Եզրակացություններ և հետագա ֆայլերի ծրագրավորում.....15

Օգտագործված գրականության ցանկ 16

Ներածություն

Հարց.

🔼Ի՞նչ հանգամանքներ են խանգարում երեխաներին ժամանակին ներկայանալ դասերին

🔼Ինչպե՞ս անել,որպեսզի սովորողները չուշանան դասերից

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի, Վիլյամ Սարոյանի N11 հիմնական դպրոցում:

Մոտ երեք ամսվա ընթացքում, 4-9 դասարաններում, պարբերաբար իրականացվել են դիտարկումներ: Դիտարկումների ընթացքում արձանագրվել է, որ տարեցտարի ավելանում է այն աշակերտների թիվը, ովքեր ուշանում են դասերից: Այդ ուշացումները առավել շատ էին առաջին ժամերին, և այդ վատ օրինակը կարծես վարակում էր նաև մյուսներին և աշակերտները սկսում էին ուշանալ դասամիջոցներից հետո սկսվող դասերից կամ ավելի ուշ էին ներկայանում ֆիզկուլտուրայի դասաժամից հետո՝ պատճառաբանելով, զգեստափոխվում են:

Դիտարկումների արդյունքում աշակերտները ներկայացնում էին դասերից ուշացման տարբեր պատճառաբանություններ:

Հետազոտության նպատակն է եղել բացահայտել՝

Դիտարկումների արդյունքում աշակերտները ներկայացնում էին դասերից ուշացման տարբեր պատճառաբանություններ:

Հետազոտության նպատակն է եղել բացահայտել՝

- Ուսումնառության գործընթացին՝ աշակերտների ներգրավվածությանը, մասնակցությանը խոչընդոտող հանգամանքները,
- աշակերտների, մանկավարժների և ծնողների վերաբերմունքը տվյալ արատավոր երևույթի նկատմամբ
- ինչպիսի՞ հանգամանքներ կարող են փոխել աշակերտների վերաբերմունքը, որպեսի նրանք ներկայանան դասերին առանց ուշանալու:
- խիստ վատ եղանակը

Դպրոցը գտնվում է քաղաքի Միկրոշրջան թաղամասում, որտեղ սովորողները հաճախում են թաղամասի տարբեր մասերից:

Դպրոցում սովորում է 1300-ից ավելի աշակերտ, ծանրաբեռնված այս դպրոցում դասերից ուշացումները խոչընդոտում եմ ուսուցման գործընթացին:

Խնդիր

Աշակերտները ուշացումը մշտական բնույթ է կրում

Տեսական մաս.

Քանի որ կրթական գործընթացի մասնակիցները հանդիսանում են՝ սովորողը, սովորողի ծնողը և

մանկավարժական այլ աշխատողներ, ուստի մանկավարժական և հոգեբանական մասնագիտական գրականության մեջ կան լայնածավալ հետազոտություններ և աշխատություններ, որոնց շրջանակներում լայն անդրադարձ է կատարվել ուսումնական գործընթացին խոչընդոտող բոլոր հնարավոր պատճառներին՝ աշակերտի անհատական և տարիքային առանձնահատկություններին, աշակերտի ծնողների դաստիարակության ոճին, ընտանեկան արժեքներին, մանկավարժի անհատական առանձնահատկություններին, ուսուցանման ոճին, մանկավարժի կողմից մանկավարժական մեթոդների, հնարների կիրառման ունակության, մանկավարժական տակտի, հմտության, միջավայրային գործոններին և այլ բազմաթիվ պատճառների: Միջավայրային գործոնները անհատից դուրս են, նրանից անկախ և կարող են ունենալ դրական կամ բացասական ազդեցություն: Այդպիսի գործոններ են՝ օրենսդրությունը, ֆիզիկական միջավայրը, մշակույթը, տեխնոլոգիաները, հասարակությունը, ծառայությունները, վերաբերմունքը, կենցաղային պայմանները և այլն:[1]

Դպրոցական տարիքում կարևորվում է սոցիալական միջավայրը և շատ է կարևորվում լավ ուսուցչի դերը՝ ով գիտի թե ինչպես պետք է համակցել խաղը և ուսումը:

Անձի հոգեսոցիալական զարգացման տեսության հիմնադիր հոգեբան Է. Էրիկսոնը նշում է, որ դպրոցական տարիքում, պետք է օգնել, որ երեխան ինքնահաստատվի և պետք չէ, որ նա բավարարվի անպատասխանատու գովեստից, քանի որ հավանության արժանանալով կարող է երեխայի մոտ ձևավորվել անհամապատասխանության և թերարժեքության զգացում:

Ուսումնական գործընթացի ընթացքում պետք է աջակցել յուրաքանչյուր երեխայի, որ նրա մոտ ձևավորվի կոմպետենտության զգացումը՝ սեփական կարողությունների, ինտելեկտի ազատ վարժեցումը, ինչն էլ հիմք է ստեղծում, որ երեխան հասուն տարիքում կարողանա ակտիվ մասնակցություն ցուցաբերել: [2]

Ըստ հոգեբան Կառլ Ռոջերսի՝ կարևոր է նպաստել աշակերտի լիարժեք գործող անձի ձևավորմանը, ինչի արդյունքում նա կկարողանա համապատասխանեցնել իր գիտակցված և չգիտակցված ապրումները, կունենա առողջ ինքնադրսևորման պահանջմունք և կկարողանա ճիշտ որոշումներ կայացնել:[3]

Դեռահասության տարիքին բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ այս տարիքում երեխաները բուռն փնտրում են այնպիսի մարդկանց և գաղափարների, որոնց նրանք կարող են հավատալ: Այդ մարդիկ պետք է ցույց տան,որ իրենք արժանի են վստահության, քանի որ դեռահասների մոտ կա վախ, որ իրենց կխաբեն: Դեռահասները փնտրում են այնպիսի մարդկանց, որոնք պատրաստ կլինեն նրանց նվիրելու սեր և կընդունեն նրանց այնպիսին, ինչպիսին նրանք իրականում կան և ոչ թե ընդհանրական մի կերպարի: Փորձարարական տվյալները ցույց են տալիս, որ այն երեխաները, ովքեր վստահելի հարաբերություններ

---

[1] Մ. Հարությունյան, Զ. Հարությունյան, Գ. Հովյան, Լ. Սարատիկյան, 2017

[2] Е. Е. Сапогова, Психология развития человека, 2005 г

[3] Մ. Հարությունյան, Զ. Հարությունյան, Գ. Հովյան, Լ. Սարատիկյան, 2017

ունեն տանը՝ ծնողների հետ ունեն ցածր տագնապայնություն:

Այս տարիքին բնորոշ առանձնահատկություններից է այն, որ դեռահասը շրջապատում ցանկանում է ցույց տալ, որ ինքն արդեն հասուն է պատասխանատու, կարևոր է դեռահասի անձի սեփական ինքնության զարգացումը: Այս նպատակին հասնելու համար, երեխան ընդունում է իր ինքնությունն որոշումները, որը տարբերվում է իրեն առաջարկվածներից: Նա դա անում է, որպեսզի հասկանա, արդյո՞ք ինքը կարող է նոր գաղափարներ ստեղծել:

Հենց այն պահին, երբ դեռահասը զգում է, որ շրջապատը սահմանափակում է իրեն, նա սկսում է հակադրվել այդ ամենին ամբողջ ուժով: Դեռահասության ճգնաժամը չհաղթահարելու հետևանքով՝ կարող է հասուն տարիքում ձևավորվել այնպիսի բնավորության գծեր, ինչպիսիք են՝ մանկամտություն, փախուստ հասուն մարդու պարտականություններից, տագնապի անորոշ զգացողություն, մեկուսացվածություն, մշտական սպասումի զգացում, որ իր կյանքում ինչ-որ բան կփոխվի:

Երեխայի մոտ ագրեսիվության աստիճանի բարձրացման պատճառ կարող են հանդիսանալ ինչպես ծնողների և երեխայի դրական էմոցիոնալ կապերի խախտումը, այնպես էլ ծնողների միջև լարվածությունը: Երբ ամուսինները անընդհատ վեճերի մեջ են, ընտանիքում ապրելը նմանվում է ճնած հրաբխի վրա ապրելուն, որը ամեն պահ կարող է ժայթքել: Այդպիսի ընտանիքում ապրելը երեխայի համար իսկական փորձություն է դառնում, մանավանդ երբ ծնողները նրան որպես փաստարկ են օգտագործում իրենց վեճերում: Երբեմն երեխան փորձում է հաշտեցնել ծնողներին, բայց հայտնվում է կրակի կենտրոնում:

Ի վերջո, երեխան կամ ապրում է անընդհատ լարվածության մեջ՝ տառապելով անկայունությունից և իր ամենամոտ երկու մարդկանց միջև կոնֆլիկտից, կամ իրավիճակը իր օգտին օգտագործելու փորձ է ձեռք բերում՝ սովորելով մանիպուլյացիայի ենթարկել մարդկանց, և իր կամքից անկախ յուրաքանչյուր իրավիճակում ագրեսիա է դրսևորում:

Դեռահասների հարաբերությունների ևս մեկ նշանակալից ոլորտ է մեծահասակների, և առաջին հերթին, ծնողների հետ, շփումը: Ծնողների <u>ազդեցությունն</u> արդեն սահմանափակ է, այն չի ընդգրկում երեխայի կյանքի բոլոր ոլորտները: Հասակակիցների կարծիքը սովորաբար ավելի կարևոր է ընկերական հարաբերություններում, ժամանակակից երաժշտության, զվարճանքների հետ կապված հարցերում: Բայց դեռահասի արժեքային կողմնորոշումները, նրա կողմից սոցիալական խնդիրների հասկացումը իրադարձությունների և արարքների բարոյական գնահատումը կախված են, առաջին հերթին, ծնողների դիրքից:

Շփման հիմնական դժվարությունները, կոնֆլիկտները ծագում են դեռահասի վարքի, ուսման և ընկերների ընտրության նկատմամբ ծնողների հսկողության պատճառով:

Հսկողությունից զատ՝ ընտանեկան հարաբերություններում կարևոր են ծնողների սպասելիքները, հոգատարությունը, պահանջների հաջորդականությունը կամ որ հաջորդականությունը, և իհարկե, այդ

հարաբերությունների հիմքում ընկած հուզական հիմքը՝ սերը, երեխային ընդունումը կամ մերժումը: Կարելի է առանձնացնել ընտանեկան դաստիարակության մի քանի տեսակներ, որոնք էապես ազդում են դեռահասի անձի զարգացման և ծնողների հետ հարաբերությունների վրա:

Դեմոկրատ ծնողները արժևորում են դեռահասի վարքը, ինքնուրույնությունը և կարգապահությունը: Նրանք իրենք են դեռահասին ինքնուրույն լինելու հնարավորություն ընձեռում իր կյանքի որոշակի ոլորտներում, նրա իրավունքները չոտնահարելով՝ միաժամանակ պահանջում են պարտականությունների կատարում: Բանական հոգատարության և ջերմ հարաբերությունների վրա հիմնված հսկողությունը սովորաբար այդքան էլ չի խանգարում դեռահասին, նա հաճախ է լսում բացատրությունները, թե ինչու իրեն կարելի անել այս կամ այն բանը, այլ պետք է անել ուրիշը: Այսպիսի հարաբերությունների դեպքում չափահասության ձևավորումը տեղի է ունենում առանց կոնֆլիկտների և ապրումների:

Ագրեսիվ ռեակցիաները կարող են պայմանավորված լինել ոչ տեղին ու հաշվենկատ չափանիշով, վիրավորող կամ նվաստացնող դիտողություններով ու ընդհանրապես, այն ամենով, ինչը կարող է դաժանություն և ցասում առաջացնել մարդու, առավել ևս՝ երեխայի մոտ: Երեխայի անձի հրապարակային չարաշահումը, անհարգալից վերաբերմունքը նրա մոտ առաջացնում են խորը և լուրջ բարդույթներ և անվստահություն սեփական ուժերի նկատմամբ:

Երբ ընտանիքում երեխային չափազանց շատ ուշադրություն է հատկացվում, նա դառնում է երեսառած և հարմարվում է իր բոլոր կամակորությունների բավարարմանը: Ծնողները սովորեցնում են երեխային այն մտքին, որ բոլորը պետք է ծառայեն իրեն: Եթե չի կատարվում հերթական կամակորությունը, երեխան պատասխանում է ագրեսիայի պոռթկումով:

Միշտ զբաղված ծնողների երեխաների ագրեսիան միջոց է գրավել ուշադրության յուրաքանչյուր՝ թեկուզ և նեգատիվ արտահայտում: Նրանք գործում են "ավելի լավ է պատժեն, քան չնկատեն" սկզբունքով:
Մեծերի աչխարհընկալումը խիստ տարբերվում է երեխաների հայացքներից: Այն, ինչը մեզ համար մանրուք է, երեխային կարող է ողբերգություն թվալ: Հաճախ պատահում է, որ մենք ուշադրություն չենք դարձնում երեխաների ապրումներին, իրական հոգեկան ցավին, բայց մեծ նշանակություն ենք տալիս այնպիսի բաների, որոնք նրանց համար մանրուքներ են թվում: Արդյունքում երեխայի մոտ կարող է տպավորություն կամ նույնիսկ համոզմունք ստեղծվել, որ մեծերը անընդունակ են հասկանալ, հետևաբար և օգնել իրեն: Երեխայի շուրջ ձևավորվում է միայնության ու անելանելիության մթնոլորտ, նա իրեն վախեցած, անպաշտպան և անօգնական է զգում: Որպես արդյունք ձևավորվում են ոչ ադեկվատ ու ագրեսիվ ռեակցիաներ:

Աշակերտները խիստ զգայուն են ուսուցիչների անձի և վերաբերմունքի նկատմամբ: Աշակերտների կողմից կարևորվում են ուսուցչի անձնային, կազմակերպչական, աչխատանքային որակները և արտաքին

տեսքը,հոգատար և սրտացավ վերաբերմունքը:

Ուսուցչի կողմից դրսևորվող բացասական որակների շարքում՝ աշակերտներն առանձնացնում են՝

- աշակերտները չեն հանդուրժում,երբ վիրավորում են ծնողներին
- երբ ուսուցիչը նկատողություն է անում հակառակ սեռի աշակերտի ներկայությամբ
- աշակերտի վրա գոռալը, մինչև վերջ աշակերտին չլսելը
- որոշ աշակերտներին գերապատվություն տալը
- ամեն չնչին առիթի դեպքում պատժելու սովորությունը
- անհարգալից վերաբերմունքը աշակերտների նկատմամբ
- աշակերտի հետ ունեցած զրույցի հրապարակումը ուսուցչի կողմից, որն էլ առաջացնում է անվստահություն ուսուցչի նկատմամբ:

2018 թվականին Լ.Իվանովիչը և Լ. Կերնը առաջարկեցին մի մեթոդաբանություն, որ լայն կիրառություն ստացավ ժամանակակից մանկավարժությունում :

Դա կանխատեսելի անցանկալի վարքագծի հաղթահարման բազմաբայլ մեթոդիկան է: Անցանկալի վարքագծի դեպքում ճիշտ կլինի, որ ծնողն ու մանկավարժը մտածեն ոչ թե ի՞նչ է անում երեխան, այլ՝ թե ինչո՞ւ է երեխան դա անում: Ի՞նչ պատճառներ կարող են լինել դրա համար: Վարքագծի ֆունկցիան պարզելը կարևոր է այն հաղթահարելու համար: Այս մոտեցումը կարևորում է ոչ թե խնդիրները գտնելն ու երեխային փոխելը, այլ՝ անցանկալի վարքագծի դրդող միջավայրային անբարենպաստ պայմանները բացահայտելը, կանխելն ու փոփոխելը:

Ըստ այդմ ՝ կարևոր է երեխայի վարքագծի նկատմամբ մեր արձագանքը:

Բնական է, որ տղաները ավելի հաճախ են ագրեսիվություն դրսևորում, քան աղջիկները: Համածայն մեր հասարակությունում ընդունված կարծրատիպերի՝ տղամարդը պետք է կոպիտ և ագրեսիվ լինի: Ոչ ագրեսիվ երեխաները դպրոցում արդեն որպես բացառություն են դիտվում: Ծնողները հարկադրված են լինում երեխային տրամադրել պատասխան հարված տալուն, քանի որ այլ կերպ դժվար կլինի մերվել տղաների հանրության մեջ, որտեղ ինքնապաշտպանության կարող-ությունը ամենաարտահայտիչ արժեքներից մեկն: Իրենց շրջապատում ընդունվ-ած լինելու համար տղաները հաճախ ստիպված են ագրեսիա ցուցաբերել (վերջին տասնամյակում նույն տենդենցը աղջիկների միջավայրում էլ է դիտվում:

Բարձր ագրեսիվությունը կարող է պայմանավորված լինել նաև կենսաբանական, սոցիալական պատճառներով: Հաճախ երեխաների ագրեսիվ ռեակցիան պայմանավորված է լինում իրենց համար հեղինակավոր մեծերի

պաշարմունքների, արժեհամակարգի դրսևորմամբ:

Օրինակ, այն ընտանիքներում, որտեղ մարդկանց նկատմամբ վերաբերմունքը կախված է հիերարխիկ աստիճանակարգից, երեխաները ունակ են զսպվել, երբ ուսուցիչը նախատում է իրենց, բայց նաև կարող են կոպտել հավասարարին կամ պահակին: Ընտանեկան բարեկեցությունը ինքնին դրական երևույթ է, բայց եթե տան անդամները ամեն ինչ չափում են փողի քանակությամբ, երեխան սկսում է անհարգալից վերաբերմունք ցուցաբերել բոլոր նրանց նկատմամբ, ովքեր քիչ են վաստակում:

Երեխաներին, հատկապես դեռահասներին, հատուկ է բաժանել բոլոր մարդկանց "մերոնց" և "օտարների", ինչը հանգեցնում է "օտարների" նկատմամբ ագրեսիայի դրսևորման, հակամարտության և հետագայում վերաճում է ավելի մեծ մասշտաբների անհանդուրժողականության:

Կարևոր է, որ երեխաները ավելի հաճախ գովեստի արժանանան ցանկալի վարքագիծ դրսևորելու համար, քան՝ մեղադրանքի, խրատի ու նախատինքի՝ անցանկալի վարքագիծ դրսևորելու համար:

Պատժելու, մեղադրելու և բարկանալու փոխարեն մենք պետք է վերլուծենք վարքագծի առաջացման նախապայմանները, դրանց դրսևորման օրինաչափությունները:

Ուստի մեր թիրախը ոչ թե երեխայի վարքն է, այլ՝ միջավայրային գործոնները,ինչու ոչ նաև ընտանիքի գործոնը: Համաձայն այս մոտեցման՝ երեխայի անցանկալի վարքագիծը հաճախ ոչ թե հետևանք է նրա անձնային առանձնահատկությունների, չար է, անուշադիր է, ագրեսիվ է, այլև՝ միջավայրային, ընտանիքի և շրջապատի գործոնների՝ պարապմունքը ձանձրալի է, մանկավարժի ձայնը հոգնեցնող է, հանձնարարությունը երեխայի ուժերից վեր է, երեխան ուշադրությունից դուրս է,ծնողները անտարբեր են,կամ էլ չափից ավել անհմաստ են խառնվում նրա գործերին,շրջապատնը էլ բացասական ազդեցություն է ունենում:

Վարքագծի այբուբեն

Վարքագծի նախապայման՝ ինչո՞ւ դրսևորվեց տվյալ վարքագիծը:

Բուն վարքագիծ

Ի՞նչ անցանկալի դրսևորում նկատվեց երեխայի վարքագծում:

Հետևանքը

ինչպե՞ս մենք արձագանքեցինք տվյալ վարքագծին:

Հայտնի է, որ անցանկալի վարքագծի դրսևորման հավանականությունը նվազում է, եթե՝ գործընթացը հստակ պլանավորված ու լավ կազմակերպված է ապահովված է երեխաների ներգրավվածությունը գործընթացում, և առկա է համագործակցություն:

Կազմակերպված է արդյունավետ աշխատանքային միջավայր

Հետազոտության նախագիծ

Հետազոտության տվյալները հավաքագրվել են 4-9-րդ դասարանի աշակերտներից, նրանց ծնողներից, դասավանդող ուսուցիչների:

Հետազոտության ընթացքում կիրառվել են.

- Ուշացողների անունները արձանագրվել է գրանցամատյանում,այդ մասին տեղեկացվել է դասղեկը և ծնողը

- անցկացվել են զրույցներ ծնողների, ուշացող աշակերտների հետ, վեր են հանվել պատճառները
- դպրոցի հոգեբանի համագործակցության արդյունքում մանկավարժական թիմի կողմից կիրառվել է մեկ համընդհանուր պահանջ ուշացող աշակերտների նկատմամբ:
- խնդրի լուծման համար ներգրավվում են նաև ծնողները
- հատուկ մշակված պահվածքի, ռեակցիաների, ջերմ բառերի և անհատական աշխատանքի շնորհիվ քայլ առ քայլ ամբողջ կոլեկտիվով փորձել ենք բարձրացնել աշակերտների պատասխանատվության զգացումը
- մշակվել են մեթոդներ, ներքին կարգապահական կանոններ, որոնք կօգնեն նվազեցնել անհիմն ուշացումները:

Մանկավարժությունը թիմային աշխատանք է և մշակված ռազմավարությունները սկսել ենք կիրառել այն մեծ թիմով ովքեր աշխատում էին 4-9-րդ դասարաններում:
Ռազմավարությունները հնարավորություն տվեցին պատասխանել հետևյալ հարցերին և կատարել հետևյալ վերլուծություն

Ի՞նչ նոր բան իմացա ուսումնասիրության արդյունքում	ուրիշ ի՞նչ տվյալների կարիք ունեմ, որտե՞ղ, ինչպե՞ս գտնեմ	ի՞նչ նոր տեղեկություններ ունեմ հետազոտության թեմայի և հարցի մասին
Որ առավոտյան ժամերին ուշացումների պատճառները տարբեր են. – աշակերտի ուշ քնելը, –ծնողների անտարբերությունը Աշակերտի հետ զրույցներից հետո ծնողները փաստում էին, որ երեխաները՝ իրենք շտապեցնում ու բացատրում էին այն անհարմար իրավիճակը, երբ իրենք ուշանում են	կարիք ունեի պարզելու ինչ մթնոլորտ է տիրում ընտանիքում, ինչ փոխհարաբերություններ են ձևավորվել հատկապես այն ուսուցիչների հետ, որոնց դասերից ավելի հաճախ են ուշանում սովորողները	Իմացա, որ ուշացող աշակերտերի մեծ մասը, անհարմար են իրենց զգում ուշացման համար ճիշտ կողմնորոշվել ու կազմակերպել իր գործողությունների շղթան, օրինակ՝ • չի տեղավորվում ժամանակի մեջ, • չի սիրում առարկան, • անպատրաստ է դասին ու նմանատիպ շատ դիտարկումներ կան

Ես նկատում եմ, որ ուշացողների շարքում կան նաև այնպիսի աշակերտներ, ովքեր միտումնավոր են ուշանում. դասն ու գիտելիքը իրենց չի հետաքրքրում, անտարբեր են դպրոցի նկատմամբ:

Ծնողների հետ համագործակցելով մանկավարժները /դասավանդող այն ուսուցիչների,որոնց դասերին հաճախ էի նկատում ուշացումները, իրենց հետ ունեցած զրույցների արդյունքում կարողացա իրենց ներկայացնել ուշացման խնդիրը, որը գալիս էր հանձնարարության բարդությունից/ տարբերակված, պարզեցված առաջադրանքներ հանձնարարեցին ծուլություն ցուցաբերող, դասից փախչող աշակերտներին: Հաջորդ հանդիպումներին տվյալ աշակերտների արված աշխատանքները գովեստների արժանացնելով ուսուցիչները մեծ ոգևորություն էին առաջացնում նրանց մոտ: Խրախուսանքները զգալի արդյունք բերեցին:

Պարզեցի, որ շատերը նախընտրում էին ուշանալ, ուշանալու դեպքում դասարան չէին մտնում քանի որ գիտեին, որ տվյալ ուսուցչի երկարաշունչ նկատողություններին շարքը անհարմար դրության մեջ է իրենց դնելու: Ես նկատում եմ, երբ ուշացողին ուսուցիչը ներս է թողնում ու օգնում է, որ արագ ներգրավվի դասին, նա շնորհակալ է լինում և փորձում է լրացնել բաց թողնվածը:

Ես նկատում եմ, որ ուշացման դեպքում նախապես հայտարարված ներքին կարգապահական կանոնները դրական ազդեցություն են ունենում: Մշակված կանոնները համալիր կերպով կիրառվում են ուշացող աշակերտների նկատմամբ:

Դրանք են՝

- ուշանալու դեպքում առանց դասը կրկնելու հարցնում են օրվա դասը
- անցած թեմային վերաբերող երեք հարցի պատասխանել
- տնայինը հարցնելու դեպքում մեկ միավոր ցածր գնահատել
- առաջինը տնայինը ներկայացնել
- ցույց տալ աշխատանքային տետրը

Եզրակացություններ և հետագա քայլերի ծրագրավորում

Երբեմ ամսվա ընթացքում արված աշխատանքի արդյունքում պարզեցի, որ կիրառված մեթոդները դրական արդյունքներ են բերում: Ուշացող աշակերտների զգալի մասը, որոնց ես դիտարկում էի 6-ը սովորում էր 8-րդ դասարանում, 5-ը՝ 9-րդ դասարանում,3-ը՝7-րդ դասարանում,4-ը՝6-րդ դասարանում,4-ը՝ 5-րդ դասարանում,3՝-ը 4-րդ դասարանում: Նրանցից 20-ը սկսեց ժամանակին ներկայանալ դասին: Կարծում եմ համառ և շարունակական աշխատանքի դեպքում ուշացող աշակերտների թիվը գնալով կնվազի:

- Ուսուցիչները հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները պետք է դրսևորեն համապատասխան վերաբերմունք, որը թույլ կտա ստեղծել այնպիսի մթնոլորտ, միջավայր, որտեղ աշակերտը կշտապի գալ, ներկայանալ ու մասնակցել դասերին:
- Անհրաժեշտ է հետեւել նախապես հայտարարված ներքին կարգապահական կանոններին:
- Ուսումնառության գործընթացի հնարավոր խոչընդոտների բացահայտման և հաղթահարման համար անհրաժեշտ է համագործակցությունը աշակերտների ծնողների, դպրոցի ուսուցիչների հետ: Առանց նախատելու հնարավորինս արագ ներգրավել աշակերտին դասի ընթացքին: Աշակերտները ևս պետք է պլանավորեն, ճիշտ կազմակերպեն իրենց անելիքները: Օրվա ճիշտ ռեժիմը կառաջացնի բարձր պատասխանատվություն, ժամանակի զգացողություն, որին պետք է աջակցեն և ծնողները, և մանկավարժները:
- Ուսուցիչների տրված հանձնարարությունները պետք է լինեն տարբերակված, որպսզի աշակերտները չխուսափեն տվյալ դասից, քանի որ չեն կարողացել կատարել տնայինը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա.Ավագյան, Լ. Բաբայան, Մ. Հովհաննիսյան, Թ. Մակարյան,Ա.Մանուկյան, Մ. Մարության, Ս.Պետրոսյան, Բարդ իրավիճակների պարզ լուծումներ, 2020 թ
2. Մ.Հարությունյան, Զ.Հարությունյան, Գ.Հովյան, Լ.Սարատիկյան, 2017 թ
3. Абрамова Г. С. , Возрастная психология, 2005 г
4. Е. Е. Сапогова, Психология развития человека, 2005 г
5. Психология развития под ред. А. К. Болотовой и О. Н.

Молчановой, 2005 г
6. Бернс Р. Развитие Я-концепции и воспитание. М.,1986.
7. Выготский Л.С. Педология подростка//Собр. соч.:В 6 т. М.,1984.Т 4
8. http://yamal-obr.ru/articles/uchitel-i-uchenik-sistema-vzaimootnoshen